«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերը

Հաստատություն՝ *ք. Կապան, թիվ 12 ՆՈՒՀ*

Դաստիարակ՝ Անահիտ Հովհաննիսյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……2

Գլուխ1.Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ……..…….3-7

Գլուխ1.1.Ընտանիքի դերն ու նշանակությունըերեխայի զարգացման հարցում……...3

Գլուխ1.2.Մանկապարտեզի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման հարցում……...5

Գլուխ2.Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ համագործակցության ձևերը, կրթական աշխատանքների կազմակերպումը և ընտանեկան դաստիարակության հարցերը……..…….8-14

Գլուխ2.1.Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ համագործակցության ընդհանուր բնութագիրը……....…….8

Գլուխ2.2. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ համագործակցության, կրթական աշխատանքների կազմակերպման ձևերը……..……11

Եզրակացություն……..……..……..15

Գրականության ցանկ……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախադպրոցական հաստատությունները (մանկապարտեզ, նախակրթարան, երեխայի խնամքի ու զարգացման կենտրոններ և այլն) կոչված են օգնելու ընտանիքին երեխայի վաղ զարգացման ու դաստիարակության հարցերում:

Նախադպրոցական կրթության մասին ՀՀ օրենքը սահմանում է նախադպրոցական կրթության նպատակը, ըստ որի այն նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի մտավոր, հոգեկան, ֆիզիկական կարողությունների համակողմանի զարգացմանը, դաստիարակությանը, խնամքին, առողջության պահպանմանը և սոցիալական ներառմանը, տարիքին համապատասխան զարգացմանը, ինքնասպասարկմանը սոցիալիզացիային, կյանքի հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, երեխայի իրավունքների պաշտպանությանը, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքին, երեխայի անհատականության ձևավորմանը և տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստմանն ու սահուն անցմանը»:

Վաղ մանկությունը երեխայի աճի և զարգացման առանցքային փուլ է, քանի որ այդ շրջանի փորձառությունները կարող են ազդել անհատի կյանքի ողջ ընթացքի վրա: Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Ընտանիքի դերը և ազդեցությունը երեխայի զարգացման, անհատականության ձևավորման ողջ կյանքում անժխտելի է: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ անփոխարինելի է ընտանիքի դերը:

Նախադպրոցական հաստատությունները չեն փոխարինում ընտանեկան դաստիարակությանը, այլ լրացնում ու համակարգում են այն՝ համագործակցելով երեխաների ծնողների ու ընտանիքների հետ: Մանկավարժական աշխատող-ծնողներ համագործակցությունը շարունակում է ընտանիքի աշխատանքը, օգնում ընտանիքին: Ուստի երեխայի անհատականության ձևավորման, ներդաշնակ զարգացման համար կարևոր է այդ երկու կարևոր օղակների արդյունավետ համագործակցությունը:

Հետազոտական աշխատանքի թեման ոչ միայն կարևոր է, այլ նաև արդիական է բոլոր ժամանակներում:

Մեր աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել և ներկայացնել մանկավարժական աշխատող-ծնող կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում՝ երեխայի, ընտանիքի և մանկապարտեզի տեսանկյունից:

Գլուխ1.Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ

Գլուխ1.1.Ընտանիքի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման հարցում

Դաստիարակությունը, ինչպես հայտնի է, նպատակաուղղված ներգործություն է երեխաների զարգացման, նրանց գիտակցության ու վարքի, աշխարհայացքի, արարքների և սովորույթների վրա: Դաստիարակության հիմնական նպատակն անձի ձևավորմանն ու նրա հետագա զարգացմանը նպաստելն է՝ սկսած ծնված օրից: Ուստի ընտանիքը եղել և մնում է անձի դաստիարակության հիմնական օղակն ու վճռական գործոնը:

Հետևապես դաստիարակության մեջ կարևորը դրա ճիշտ սկիզբն է: Սխալ դաստիարակությունը միշտ արատներ է ծնում: Հայաստանում դեռևս 4-րդ դարից կիրառվել են ընտանիքին, ամուսնությանը, ընտանեկան դաստիարակությանը վերաբերող ներքին և արտաքին կանոններ:

Մխիթար Գոշը (12-րդ դար) նշում էր, որ զավակների զանցանքների և հանցաքների համար ամենից առաջ պատասխանատու են ծնողները: Ներսես Շնորհալին խորհուրդ էր տալիս երեխային դաստիարակել վաղ մանկությունից, խրատել, նրանց սրտի մեջ ներարկել բարության, ազնվության և մարդասիրության սերմեր:

19-րդ դարի հայ գրողներն էլ (Խ. Աբովյանը, Ռաֆֆին, Ռ. Պատկանյանը,Ղ. Աղայանը, Մ. Նալբանդյանը) աճող սերնդի կրթության և դաստիարակության գործում մեծ տեղ էին տալիս ընտանիքին: Նրանք ընդգծում էին ընտանիքի վճռորոշ դերը՝ երեխայի ապագայի ճիշտ կազմակերպման, նրա հակումների անկաշկանդ զարգացման առումով:

Ծնվելու պահից երեխան հայտնվում է իր համար բոլորովին նոր մի միջավայրում, որտեղ նրա հիմնական ու առաջին սյունը ընտանիքն է: Երեխան աչքերը բացելով տեսնում է իր ծնողներին, շփվում նրանց հետ: Ծնողների վաղ ներգործությունը, երեխայի հետ շփումը ազդում են նրա հետագա զարգացման վրա, նույնիսկ շատ վաղ տարիքում, երբ կարող են չգիտակցվել երեխայի կողմից: Դաստիարակչական ներգործությունների արդյունավետությունը կախված է նաև ծնողների միջև առկա փոխհարաբերություններից, ընտանիքի կյանքի ձևից: Դաստիարակությունն ընտանիքում դրսևորվում է ամենատարբեր իրավիճակներում: Նման շարունակական ու տևական ներգործությունն արդյունավետ է երեխայի նյարդային համակարգի ներդաշնակ ձևավորման համար:

Ընտանիքն ավելի լայն հնարավորություն ունի երեխային ընդգրկելու գործունեության բազմազան ու տարաբնույթ ձևերով (կենցաղային, աշխատանքային, տնտեսական, հաղորդակցական- դաստիարակչական), քան մանկապարտեզը: Եթե մանակապարտեզում երեխային դեպքից դեպք է որևէ աշխատանք հանձնարարվում, ապա

ընտանիքում բոլորովին այլ պատկեր է: 1,5-2 տարեկան երեխան կարող է մշտական պարտավորություններ ունենալ, ասենք՝ երեկոյան հավաքել խաղալիքները, հայրիկին հողաթափեր, պապիկին թերթ մատուցել և այլն: 3-4 տարեկան երեխային կարելի է վստահել ջրել սենյակային բույսերը, օգնել մեծերին և այլն:

<<Երեխան ընտանիքի հայելին է>>՝ արտահայտությունը դիպուկ կերպով բնութագրում է երեխայի վերաբերմունքը այն հոգևոր և բարոյական սկզբունքների նկատմամբ, որոնք ընդունված են նրա ընտանիքում:

Յուրաքանչյուր ընտանիք ունի ճիշտ կամ սխալի, բարու և չարի, գթասրտության, կարելիի ու չի կարելիի իր պատկերացումները: Եթե երեխայի շրջապատում թույլատրելի է համարվում ստի, կեղծիքի ու դաժանության առկայությունը, ապա դժվար թե այդ երեխաները զերծ մնան դրանց ավերիչ ազդեցությունից: Ընդօրինակելով մտերիմներին, սիրելի մարդկանց, հետևելով նրանց կենսական դասերին՝ երեխան աստիճանաբար յուրացնում է վարվելակերպի, փոխհաղորդակցման մշակույթը: Մեծ մանկավարժներն ընդգծում են, որ ընտանեկան դաստիարակությունն ամենից առաջ ծնողների ինքնադաստիարակությունն է:

Ժամանակակից գիտությունն ընդգծում է երեխայի զարգացման ու դաստիարա-կության գործին վաղ միջամտության դերը: Սակայն բոլոր ընտանիքները չէ, որ լիովին կատարում են իրենց դերը՝ համալիր բարենպաստ ներգործությունը: Պատճառները բազմազան են. որոշ ընտանիքներ չեն ցանկանում դաստիարակել, մյուսները չեն կարողանում, երրորդները՝ չեն հասկանում դրա կարևորությունը:

Բոլոր դեպքերում, նույնիսկ բարենպաստ և երեխայի զարգացմամբ զբաղվելու կարևորությունը գիտակցող ընտանիքների համար զգացվում է նախադպրոցական հաստատությունների օգնության անհրաժեշտությունը, առնվազն հասակակիցների միջավայրի, նրանց և այլ մեծահասակների հետ սոցիալական շփման ապահովման տեսանկյունից, ինչը դժվար է ապահովել ժամանակակից ընտանիքներում, որտեղ հիմնականում մեկ կամ երկու երեխա է մեծանում:

Գլուխ1.2.Մանկապարտեզի դերն ու նշանակությունը երեխայի զարգացման հարցում

Մարդկային շփման առաջին փորձը երեխաները ստանում են ընտանիքում, բայց հասարակությանն ինտեգրվելու առաջին մեծ փուլը երեխայի համար մանկապարտեզն է: Մանկապարտեզը մեծ դեր ունի մանկան սոցիալականացման գործում: Այստեղ երեխան գտնում է նոր միջավայր, նոր աշխարհ՝ նոր կանոններով, նոր առօրյայով: Այն մի վայր է, որը երեխային բերում է ինքնաճանաչման, զարգացնում նրա հետաքրքրություններն ու ազատությունը: Մանկապարտեզն այն վայրն է, ուր զարկ է տրվում երեխայի մտավոր ուժերի զարգացմանն ու կառուցվում նրա սոցիալական կերպարը:

Մանկապարտեզը, ի տարբերություն ընտանեկան միջավայրի, հնարավորություն է տալիս երեխային շփվել իր հասակակիցների հետ, կրթվել և դաստիարակվել իր տարիքին համապատասխան ծրագրերով և մեթոդներով, սովորել և ընտելանալ օրվա ժամակարգին, աշխատակարգին, դառնա ավելի ինքնուրույն: Մանկապարտեզը ստեղծում է այնպիսի միջավայր, որը կնպաստի երեխայի զարգացմանը, իսկ դաստիարակը ստանձնում է խաղընկերոջ դերը:

Օրվա գործունեությունը պլանավորելիս՝ պետք է պլանավորել նաև խթանող, երեխաներին խրախուսող խաղեր:

Դաստիարակը պետք է հետևի երեխաներին, որպեսզի հասկանա՝ ինչն է հասկանալի, ինչը՝ անհասկանալի նրանց: Հիմնվելով դիտարկումների վրա՝ պետք է դաստիարակը առաջարկի հավելյալ առաջադրանքներ, որոնք կնպաստեն մտածելուն: Երեխաների զարգացման կարևորագույն նախապայմանը բոլոր ոլորտներում՝ ֆիզիկական, սոցիալական, հուզական և իմացական փոխկապակցվածություն է: Մի ոլորտի զարգացումը նպաստում է մյուս ոլորտների առաջընթացին: Կարևորագույն նախապայմանը խախտված է համարվում, երբ շեշտը դրվում է իմացական ոլորտի վրա՝ նվազեցնելով երեխայի զարգացման մյուս ոլորտների նշանակությունը: Որպեսզի երեխան արագ յուրացնի ինֆորմացիան, անհրաժեշտ է, որ այն կապված լինի երեխայի կյանքի ու միջավայրի հետ և համապատասխանի նրա զարգացման մակարդակին: Երբ երեխաները զգում են, որ սովորածն առնչվում է իրենց կյանքի հետ, ավելի հետևողական են կատարում առաջադրանքը և սովորում են ավելին: Փորձենք դիտարկել մանկապարտեզի առավելությունները՝ երեխայի զարգացման տարբեր ոլորտների վրա ազդեցության տեսանյկյունից.

Սոցիալական ազդեցություն՝

Մանկական հոգեբաների մեծ մասը միակարծիք են, և պնդում են, որ երեխան պետք է հաճախի մանկապարտեզ, քանի որ այն մեծ դեր ունի երեխայի սոցիալականացման

գործում: Հայտնվելով մանկապարտեզում՝ իրեն անծանոթ շրջապատում, երեխան շփվելու նոր հատկություն է ձեռք բերում: Եթե նա տանը սովորել է առաջին իսկ պահանջով ստանալ այն, ինչ ուզում է, կամ իր ուզածին հասնել լացով, ապա նոր միջավայրում նա ստիպված է համարվել և ուրիշ կարծիքը հաշվի առնել: Երեխայի էմոցիոնալ դաշտում տեղի են ունենում փոփոխություններ: Եթե առաջ նա կարեկցում էր հեքիաթների կամ մուլտֆիլմերի հերոսներին, ապա հիմա սկսում է կյանքի նոր փուլ, որտեղ ընկերներն իրական են: Մանկապարտեզում կազմակերպվում են միջոցառումներ, նշվում են տարեդարձներ, կազմակերպվում են արշավներ, այցելում են թանգարաններ, թատրոններ: Երեխան սովորում է արձագանքել իրադարձություններին: Սահմանվում է հստակ օրակարգ. փոքրիկը զբոսնում է, սնվում, խաղում, սովորում, քնում է օրվա հստակ ժամերին: Ճիշտ սահմանած օրակարգը երեխայի հոգեբանական և էմոցիոնալ զարգացման կարևոր դրույթներից մեկն է: Մանկապարտեզում երեխան ստանում է իր առաջին առաջադրանքները, որոնք փորձում է ճիշտ կատարել, օրինակ՝ սեղանները սպասքադրել, դասավորել խաղալիքները, ուտելուց հետո հավաքել սպասքը , ինքնուրույն հանվել, հագնվել և այլն: Նման պարզ հանձնարարություններ կատարելը զարգացնում է երեխայի պատասխանատվությունն ու ինքնուրույնությունը:

Հոգեբանական ազդեցություն՝

Մանկապարտեզ հաճախելը դրական է ազդում նաև երեխայի հոգեկան զարգացման վրա:

Ի տարբերություն տանը ծնողի, ընտանիքի անդամի կամ դայակի հսկողությամբ մեծանալուն՝ մանկապարտեզ գնալիս զարգանում են երեխայի՝

Սոցիալական հմտությունները. նա սովորում է արդյունավետ հաղորդակցվել ուրիշ անհատների հետ, (ինչն էլ էականորեն տարբերվում է ընտանիքի անդամների հետ հարաբերություններից):

Թիմում աշխատելու հմտությունները,

Ձեռք է բերում նոր գաղափարներ, մոտեցումներ,

Ընդլայնում է աշխարհայացքը:

Մանկապարտեզ հաճախելն ունի նաև մի շարք այլ առավելություններ:

Կա հստակ սահմանված ռեժիմ: Ինչքան ուզում է հետևողական լինի ծնողը, դայակը կամ տատիկը, տնային պայմաններում օրվա ռեժիմին հետևելը շատ ավելի բարդ է, երբեմն նույնիսկ՝ անհնար:

Երեխաների հետ զբաղվում է հատուկ նրանց հետ աշխատելու համար մասնագիտացված անձնակազմ, ինչը ոչ միշտ է հնարավոր ապահովել խնամակալի դեպքում:

Հետազոտությունները ցույց են տալիս նաև, որ մանկապարտեզից հետո երեխաներն

ավելի արագ և հեշտ են հարմարվում դպրոցին: Այստեղ գլխավորը ոչ թե ձեռք բերած ուսումնական գիտելիքներն են (տառաճանաչություն կամ մաթեմատիկա), այլ կյանքի մի շարք հմտությունները, օրինակ՝ ռեժիմին սովոր լինելը, ուշադրության ւկենտրոնացումը, խմբով աշխատելը, սոցիալական հմտությունները և այլն:

Գլուխ2.Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ համագործակցության ձևերը, կրթական աշխատանքների կազմակերպումը և ընտանեկան դաստիարակության հարցերը

Գլուխ2.1.Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ համագործակցության ընդհանուր բնութագիրը

Ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում ընկած է համագործակցությունը: Մանկավարժները պետք է ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի դաստիարակության: Կարևոր է, որ ծնողները հավասար ընկալեն մանկավարժ-երեխա փոխհարաբերությունը, զգան դաստիարակի մասնագիտական հմտության արժեքը, գնահատեն նրա անձնային հականիշները և մասնակցեն մանկապարտեզում իրականացվող կրթության, դաստիարակության և զարգացման գործընթացին: Այդ համագործակցությունից շահում է, թե՞ երեխան, թե՞ ընտանիքը, թե՞ տվյալ հաստատությունը:

Վաղ մանկության շրջանում երեխաներն իրենց ինքնուրույնությունը, անհատականությունը հաստատելու, ապահով, բարեկեցիկ կյանք ունենալու համար մեծապես կախված են լինում իրենց ընտանիքից:

Ծնողները երեխայի առաջին ուսուցիչներն են և առաջին օրինական ծառայողները: Իսկ երեխաները հրաշալի ընդօրինաողներ են: Այդ իսկ պատճառով ծնողները (և երեխայի հետ շփվող բոլոր մեծահասակները) պետք է հետևեն իրենց ցանկացած քայլին, խոսքին և կատարալ գործողություններին: Բայց ընտանիքները շատ տարբեր են, և չենք կարող ակնկալել, որ բոլոր ընտանիքները նույն կերպ կմասնակցեն երեխայի կրթությանը, խնամքին, դաստիարակությանը, հնարավորինս շատ ժամանակ կհատկացնեն նրանց և կաջակցեն ամենափոքր հարցերում:

Այս պարագայում մեծ է մանկապարտեզի և պրոֆեսիոնալ մանկավարժի դերը: Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները: Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ, ավելի միավորում է նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը:

Վաղ տարիքի երեխաների սոցիալական զարգացումը կանոնակարգվում է երկու կառույցների միջոցով՝ նախադպրոցական հաստատություն և ընտանիք: Որոշ մանկավարժներ, վստահելով իրենց գիտելիքներին, համարում են, որ իրենք բոլորից ճիշտ են դաստիարակում: Այդպես են մտածում նաև շատ ծնողներ՝ կարծելով, որ իրենց երեխային ավելի լավ գիտեն և հաջողությամբ կարող են լուծել նրան վերաբերող ցանկացած խնդիր:

Այս երկու մոտեցումներն էլ թերի են: Անհրաժեշտ է ի մի բերեր այդ երկու սոցիալական ինստիտուտների (ընտանիքի և նախադպրոցական հաստատության) ուժեղ և թույլ կողմերը: Երեխայի զարգացման որոշ ոլորտներում, օրինակ՝ հուզական, ֆիզիկական, ընտանիքի հնարավորություններն են ավելին, իսկ ուսուցման, ստեղծագործական ունակությունների զարգացման և այլն հարցերում՝ մանկապարտեզինը և այլն:

Առավել արդյունավետ աշխատանքի համար ժամանակակից մանկապարտեզի և ընտանիքի փոխհարաբերության հիմքում պետք է դրվի համագործակցությունը: Մանկավարժները պետք է նախաձեռնող լինեն, ստեղծեն ներդաշնակ, ամուր կապ՝ ի շահ երեխայի զարգացման: Արդյունավետ համագործակցության համար անհրաժեշտ է, որ մանկապարտեզը դառնա բաց համակարգ: Ամենից առաջ անհրաժեշտ է մանկապարտեզի դռները լայն բացել ծնողների և ընտանիքի մյուս անդամների առաջ: Հարկավոր է ընդլայնել ավանդական հաղորդակցման (տոնակատարություններ, ծնողական հավաքներ և այլն) շրջանակները:

Վաղ մանկության շրջանում երեխաներին իրենց ինքնությունը, անհատականությունը հաստատելու, ապահովություն, խնամք և բարեկեցություն ունենալու համար կախված են լինում իրենց ընտանիքներից: Ընտանիքների և մանկապարտեզի հաղորդակցումը նպաստում է նրանց փոխըմբռմանն ու կողմնորոշմանը:

Ընտանիքների և նախադպրոցական հաստատության գործունեության համատեղ ծրագիրը հեշտացնում է երեխայի սոցիալական զարգացումը՝ սոցիալականացումը:

Երբ ընտանիքի անդամները դրական մասնակցություն են ունենում մանկապարտեզի կյանքին, նույնիսկ եթե այդ մասնակցությունը կարճատև է և ոչ պարբերական, երեխայի ինքնագնահատականը մեծանում է: Երեխային վստահություն է ներշնչում այն հանգամանքը, որ իր ընտանիքը հավանություն է տալիս տան աշխարհից լիովին տարբերվող այն մյուս աշխարհին, որտեղ ինքն անցկացնում է առանց ծնողների: Մանկապարտեզի կյանքին ընտանիքների մասնակցությունը է՞լ ավելի է ոգեշնչում երեխաներին:

Ի՞նչ են շահում դաստիարակներն ու պարտեզը

Ծնողների և դաստիարակի միջև երեխայի կարիքների և զարգացման մակարդակի մասին տեղեկությունների փոխանակումից շահում է թե՞ ընտանքը, թե՞ մանկապարտեզը: Ծնողները, լինելով տարբեր մասնագիտությունների տեր մարդիկ, կարողանում են մանկապարտեզին աջակցել կոնկրետ նախաձեռնություններում՝ սկսած նյութականից մինչև մասնագիտական խորհրդատվություն:

Մանկապարտեզի աշխատանքն ավելի արդյունավետ է դառնում, երբ ծնողներն ու ընտանիքը դառնում են նրա գործընկերը, ընդունում և շարունակում են մանկապարտեզի նախաձեռնությունները, ինչպես նաև իրենք են նախաձեռնություններով հանդես գալիս:

Ի՞նչ է շահում ընտանիքը

Մանկապարտեզի կյանքին ծնողների մասնակցությունը օգնում է ծնողներին ավելի լավ հասկանալ մանկապարտեզի ծրագիրը, հասկանալ իրենց երեխայի հաջողությունների և դժվարությունների հիմքերն ու պատճառները, դիտարկել երեխայի վարքը, հասկանալ երեխայի զարգացման հետ կապված հարցերը, որոնք էլ ավելի հեշտ կդարձնեն երեխայի դաստիարակումը տանը:

Ծնողներն ու ընտանիքը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալ երեխայի զարգացմանն առնչվող այն բոլոր հարցերում, որոնցում իրենք դժվարանում են կամ չեն կողմնորոշվում:

Մանկապարտեզի կյանքում ներգրավելու համար դաստիարակները պետք է նախաձեռնող լինեն և ուղիներ փնտրեն երեխաների միջոցով յուրաքանչյուր ընտանիքի հետ հաղորդակցվելու համար: Դրա համար տնօրինությունը և դաստիարակները պետք է մշակեն և զարգացնեն ծնողների և ընտանիքի այլ անդամների հետ աշխատելու համար անհրաժեշտ հստակ նախագծեր և դրանց իրականացման մեթոդներ: Որպեսզի ընտանիքի մեծամասնությունը ներգրավվի, պետք է անհատական մոտեցուն կիրառվի:

Մանկապարտեզների որոշ մասում ծնողների հետ արագ հաղորդակցում ապահովելու համար օգտագործում են ՖԲ հարթակը՝ ստեղծելով մանկապարտեզի խմբի էջ: Որոշ դեպքերում էջը վարում է կոնկրետ պատասխանատուն, կան մանկապարտեզներ, որտեղ էջը վարում են նաև դաստիարակները: Էջում սովորաբար տեղադրվում են տարվա ընթացքում իրականացված միջոցառումների տեսանյութեր, երբեմն՝ օրվա գործունեության մասին լուսանկարներ:

Պետական մանկապարտեզներում ծնողի մուտքը խմբասենյակ արգելվում է: Ծնողները մուտք են գործում միայն հանդերձարան՝ երեխային օգնելու նպատակով: Այս գործոնն արդեն մեծ պատնեշ է ստեղծում ընտանիք-մանկապարտեզ հարաբերությունների կառուցման հարցում: Ծնողները մանկապարտեզային գործունեությանը մասնակից են դառնում բաց պարապմունքների և կազմակերպած ցերեկույթների ժամանակ, որտեղ մեծ մասամբ լինում են հանդիսատեսի դերում:

Գլուխ2.2. Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների հետ համագործակցության, կրթական աշխատանքների կազմակերպման ձևերը

Սաների ծնողների և մանկավարժական աշխատողների համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Մանկավարժական աշխատողի և սաների ծնողների կանոնավոր և արդյունավետ համագործակցության ուղղություններն են.

-Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողությունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:

-Ծնողական ժողովներ.քննարկում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:

-Ծնողական համաժողովներ.դրանց նպատակը ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակումն է:

-Առավոտյան հանդիպումներ. առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատուներում:

-Հանդիպումներ օրվա երկրորդ կեսին. դաստիարակները ներկայացնում են այն գործողությունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կատարվել նաև տանը:

-Գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներն են այն ծնողների և մանկավարժների համար, ովքեր հետաքրքվում են գրքով և կարդալուց հետո հավաքվում են՝ կիսելու իրենց գաղափարներն ու կարծիքները:

-Այցելություններ ընտանիք.

-Բաց դռների օրեր.

-Հարվ ու պատասխանի ցերեկույթներ.

-Մանկավարժական հյուրասրահ.

-Գաղափարների տոնավաճառ.

-Վստահության հեռախոս.

-Բարի գործերի օրեր.

-Կլոր սեղան.

-Զրույցներ՝ անհատական և խմբային.

-Խորհրդատվություններ՝ անհատական, ենթախմբով և խմբային.

-Անկետավորում.

-Երեխաների ընդհանուր նպատակային զննումներ.

-Փառատոններ և տոնակատարություններ.

-Սպորտային միջոցառումներ.

-Ցերեկույթներ:

Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկացմանը: դրանց նախապատրաստումը դաստիարակները պետք է դիտենորպես մի շարունակական գործընթաց:

Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնողները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթության և դաստիարակության պլաններին: տեղեկատվության ձևով հաղորդվում են մանկավարժական գիտելիքներ: Ձևավորվում են անկյուններ, որոնցում տեղադրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով:

Հատուկ ուշադրության են արժանի /Խորհուրդ են տալիս ծնողները/ ընդհանուր խորագրով նյութերը /այստեղ հայրիկները և մայրիկները գաղտնիքներ են փոխանակում/: Ներառված են <<Նոր բուժման ձև գրիպից>>, <<Աղցանների բաղադրատոմսեր>>, <<Լավագույն տոնական սեղան՝ ծնողների մասնակցությամբ>> և այլ օգտակար խորհուրդներ:

Գոյություն ունեն մանկապարտեզ-ընտանիք արդյունավետ համագործակցության երկու հիմնական ուղիներ՝

1.հետևողական, հստակ, երկկողմանի հաղորդակցություն,

2.ծնողների ներգրավման բազմազան միջոցներ:

<<Ղափամայի>>պատրաստում ծնողների հետ

Տիկնիկային ներկայացում ծնողների մասնակցությամբ

Երկկողմանի հաղորդակցության կանոնավոր հնարավորությունների միջոցով ծնողներն ու մանկավարժական աշխատողները սերտորեն համագործակցում են՝ ի շահ երեխաների բնականոն զարգացման:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մանկապարտեզ-ընտանիք հարաբերությունների և համագործակցության մասին մանկավարժական որոշ գրականություն, ինչպես նաև Կապանի մի շարք մանկապարտեզների կոնկրետ փորձը, եկանք մի շարք եզրահանգումների.

Երեխայի դաստիարակության և կրթության համար հիմնական պատասխանատվության կրողն ընտանիքն է: Մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին, ավարտին հասցնում նրա սկսած աշխատանքը՝ ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր՝ երեխայի զարգացման համար:

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից:Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, որովհետև մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որն էլ երկուստեք հաճելի է:

Երբ ծնողը մասնակից է դառնում մանկապարտեզի առօրյային, խաղերին, միջոցառումներին և այլն, դա ավելի ամրացնում է մանկապարտեզ -ընտանիք կապը:

Ընտանիք-պարտեզ արդյունավետ համագործակցություն մեծապես նպաստում է երեխայի զարգացմանը, դրանից շահում են թե՞ ընտանիքը, թե՞ պարտեզը, իսկ որ ամենակարևորն է, արդյունքում մեծապես շահում է ինքը՝ երեխան:

Ուսումնասիրելով հետազոտական աշխատանքը, կարելի է առանձնացրել մի քանի կարևոր կետ՝ ընտանիքին մանկապարտեզի կյանքին ներգրավելու համար.

Ընտանիքը պետք է դառնա մանկապարտեզի գործընկերը:

Ընտանիքը պետք է ընդունի մանկապարտեզի մանկավարժական մոտեցումները և սկզբունքները:

Մանկապարտեզը ծնողին պետք է դիտարկի որպես գործընկեր, պատվիրատու. լսի ծնողի անհանգստությունները, կարևորի նրա դիտարկումները, տարբեր մասնագիտություններ ունեցող ծնողներին դիտարկի որպես փորձագետներ:

Ծնողներին պետք է ներգրավի մանկապարտեզի ամենօրյա կյանքին՝ ներառելով նրանց տարբեր գործունեություններում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան <<Նախադպրոցական մանկավարժություն>>,Երևան-2008

2.Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան <<Դրական ծնողավարման ձեռնարկ>>, Երևան, <<Սեյվ դը չիլդրեն>>, 2011

3.Հ. Միտոյան, Լ. Սմբատյան <<Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար>>, Երևան,2011

4. Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր /4-5տարեկանների/,Երևան 2011

5.Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր/5-6տարեկանների/, Երևան 2007

6.<<Նախադպրոցական մանկավարժություն>> դասագիրք բուհերի համար, Երևան, 1967

7.Նախաշավիղներ